ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

e-mail:ararathnaberd@yandex.ru
հեռ. 098025050

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 7-Ն

18 ապրիլի 2013 թվական

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀՆԱԲԵՐԴԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետերի պահանջներով ,ինչպես նաև «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1կետի 1) ենթակետի բ)կետով, համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ՝

1.Հաստատել Հնաբերդ համայնքի ղեկավար Մարատ Պողոսյանի կողմից ներկայացված «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հնաբերդի գյուղապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությունը համաձայն հավելված 1-ի.

2. Ուժը կորցրած ճանաչել «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հնաբերդի գյուղապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությունը հաստատելու մասին համայնքի ավագանու 2012թ.-ի դեկտեմբերի 6-ի թիվ 23/1-Ն որոշումը:

3. Առաջարկել համայնքի ղեկավարին «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հնաբերդի գյուղապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկը գրանցել պետական ռեգիստրում և կատարել դրա հետ կապված բոլոր գործառույթները:

Ավագանու անդամներ՝

Մ. Զաքարյան
Դ. Դավթյան
Վ. Սիմոնյան

Համայնքի ղեկավար Մ. Պողոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

e-mail:ararathnaberd@yandex.ru

հեռ. 098025050

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 8 -Ն

18 ապրիլի 2013 թվական

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ.-Ի ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ՝

Թույլատրել համայնքի ղեկավարին Հնաբերդ համայնքի 2013 թվականի բյուջեում կատարելու հետևյալ փոփոխությունները .

1)վարչական բյուջեի 09.01.01.51(Նախադպրոցական կրթություն) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4637(Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայքների ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածից 50.0 հ.դ, տեղափոխել 09.02.02.51 (Հանրակրթական ուսուցում) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4637(Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածի վրա՝ ավարտական դասարաններին վերջին զանգի կապակցությամբ ֆինանսական աջակցություն տալու համար:

Ավագանու անդամներ՝

Մ. Զաքարյան

Դ. Դավթյանը

Վ. Սիմոնյան

Մ. Պողոսյան

Համայնքի ղեկավար՝